

## Երևան

Երևան քաղաքում կատարվում են փոշու\*, ծծմբի երկօքսիդի\*\*, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի\*\*\* և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և հինգ անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած երեք դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

2019 թվականի 2-րդ եռամսյակում անշարժ դիտակայաններում կատարվել է մթնոլորտային օդի 42778 ավտոմատ դիտարկում, վերցվել է ակտիվ նմուշառման 1764 փորձանմուշ, իսկ շարժական դիտակետերից պասիվ նմուշառման 1036 փորձանմուշ:

Փոշու միջին ամսական կոնցենտրացիան մայիսին գերազանցել է ՍԹԿ-ն 1.3 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

*Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները  
(ակտիվ նմուշառում)*

### Ապրիլ

Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ <sup>3</sup>	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>	Առավելագույն կոնցենտրացիա ըստ դիտակայանների, մգ/մ <sup>3</sup>	Դիտարկումների քանակ	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.017	0.077 (դիտ. № 2)	150	9
Ազոտի երկօքսիդ	0.04	0.021	0.064 (դիտ. № 2)	149	4
Փոշի	0.15	0.147	0.671 (դիտ. № 2)	147	42
Գետնամերձ օզոն	0.03	0.006	0.021 (դիտ. № 2)	150	-

### Մայիս

Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ <sup>3</sup>	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>	Առավելագույն կոնցենտրացիա ըստ դիտակայանների, մգ/մ <sup>3</sup>	Դիտարկումների քանակ	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.014	0.033 (դիտ. № 7)	143	-
Ազոտի երկօքսիդ	0.04	0.014	0.043 (դիտ. № 1)	142	1
Փոշի	0.15	0.188	0.870 (դիտ. № 2)	142	51
Գետնամերձ օզոն	0.03	0.008	0.029 (դիտ. № 2)	143	-

### Հունիս


Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ <sup>3</sup>	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>	Առավելագույն կոնցենտրացիա ըստ դիտակայանների, մգ/մ <sup>3</sup>	Դիտարկումների քանակ	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.017	0.068 (դիտ. № 7)	150	-
Ազոտի երկօքսիդ	0.04	0.013	0.043 (դիտ. № 18)	150	2
Փոշի	0.15	0.139	0.627 (դիտ. № 18)	148	15
Գետնամերձ օզոն	0.03	0.006	0.015 (դիտ. № 18)	150	1

\* կախված մասնիկներ



\*\* անհիդրիդ ծծմբային


\*\*\* ածխածնի օքսիդ

Ածխածնի մոնոքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները.





Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Ծծմբի երկօքսիդ (SO<sub>2</sub>)  
Կոնց. (մգ/մ<sup>3</sup>)




Երևան



**Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.**



Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





## Գյումրի

Գյումրի քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է մեկ անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:

Անշարժ դիտակայանում վերցվել է մթնոլորտային օդի ակտիվ նմուշառման 81 փորձանմուշ, շարժական դիտակետերում՝ պասիվ նմուշառման 417 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

*Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.*





## Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:

Անշարժ դիտակայաններում վերցվել է մթնոլորտային օդի ակտիվ նմուշառման 819 փորձանմուշ, շարժական դիտակետերում պասիվ նմուշառման 623 փորձանմուշ:

Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան երեք ամիսների ընթացքում ՍԹԿ-ն գերազանցել է 1.1 անգամ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ապրիլին գերազանցել է ՍԹԿ-ն աննշան, միջին ամսական կոնցենտրացիան կազմել է 0,1504մգ/մ<sup>3</sup> (ՍԹԿ<sub>միջ.օր</sub>=0.15մգ/մ<sup>3</sup>), մայիսին և հունիսին գերազանցել է ՍԹԿ-ն 1.2 անգամ: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:

*Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների կոնցենտրացիաների փոփոխությունները.*







## Ալավերդի

Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և ածխածնի մոնօքսիդի դիտարկումներ: Գործում են երեք անշարժ դիտակայան և 42 շարժական դիտակետ:

2019 թվականի 2-րդ եռամսյակում անշարժ դիտակայաններում կատարվել է մթնոլորտային օդի 36212 ավտոմատ դիտարկում, վերցվել է ակտիվ նմուշառման 721 փորձանմուշ, իսկ շարժական դիտակետերից պասիվ նմուշառման 1083 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները\*:

*Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.*



\* Ալավերդի քաղաքի ծծմբի երկօքսիդի մայիս ամսվա տվյալները ցածր վստահելիության պատճառով օդի որակի գնահատման մեջ հաշվի չեն առնվել



## Հրազդան

Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետեր:

Անշարժ դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է մթնոլորտային օդի 254, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 438 փորձանմուշ:

Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ապրիլ ամսին գերազանցել է ՍԹԿ-ն 2.2 անգամ, մայիս ամսին՝ 1.6 անգամ, հունիս ամսին՝ 1,1 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

*Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.*





## Արարատ

Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Անշարժ դիտակետում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է մթնոլորտային օդի 91 փորձանմուշ, շարժական դիտակայաններում պասիվ նմուշառման եղանակով՝ 306 փորձանմուշ:

Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ապրիլ ամսին գերազանցել է ՍԹԿ-ն 1.2 անգամ, մայիս ամսին՝ 1.1 անգամ, հունիս ամսին՝ 1.8 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

*Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.*





## Կապան

Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: 2019 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում Կապան քաղաքի 11 շարժական դիտակետերից պասիվ նմուշառմամբ վերցվել է մթնոլորտային օդի 109 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

*Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.*





## Քաջարան

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաջարան քաղաքի 15 դիտակետից պասիվ նմուշառմամբ վերցվել է մթնոլորտային օդի 155 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

*Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.*





## Չարենցավան

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Չարենցավան քաղաքի 10 դիտակետից պասսիվ նմուշառմամբ վերցվել է մթնոլորտային օդի 259 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

*Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.*





## Ծաղկաձոր

Ծաղկաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 14 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Անշարժ դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է մթնոլորտային օդի 273, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 364 փորձանրմուշ:



Մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները՝:

### *Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները.*



\* Համաձայն 160-Ն որոշման առողջարանային և զբոսաշրջության քաղաքներում նորմը վերցվում է 0.8\*ՍԹԿ:

Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները.





**«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր»**

**Մթնոլորտային օդ**

Ամբերդի կայանում 2019 թվականի 2-րդ եռամսյակում վերցվել է մթնոլորտային օդի 261 և փոշու 91 փորձանմուշ:

Մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 մետաղների պարունակությունները: Կատարված դիտարկումների վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն կտրվի տարեկան տեղեկագրում: Ավտոմատ եղանակով գետնամերձ օզոնի պարունակության որոշման համար կատարվել է մթնոլորտային օդի 1184 դիտարկում:

Ազոտի երկօքսիդի ( $ՍԹԿ_{մթ.}=0.04մգ/մ^3$ ) և ամոնիակի ( $ՍԹԿ_{մթ.}=0.04մգ/մ^3$ ) միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել ՍԹԿ-ները:

*Մթնոլորտային օդում ամոնիակի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները.*

